ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ծաղկունք, 4-74-88, tsaghkunq.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
13 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 18-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-Ի ԹԻՎ 05 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի ավագանու 2019 թվականի հունիսի 13-ի թիվ 05 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ԱՆԳԻՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ԵՐԱՆՈՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ

ԵՐԱՆՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ԱԼԻԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Ծաղկունք համայնքի ավագանու
2019 թվականի հունիսի 13-ի N05 հերթական
նիստի թիվ 18-Ա որոշման

ՕՐԱԿԱՐԳ

ԹԻՎ 05 ՆԻՍՏԻ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-Ի ԹԻՎ 05 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
3. ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԼՈՒՍԻՆԵ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ծաղկունք, 4-74-88, tsaghkunq.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 19-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով, 82-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի 2019-2023թթ հնգամյա զարգացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ԱՆԳԻՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ԵՐԱՆՈՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ

ԵՐԱՆՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ԱԼԻԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Ծաղկունք համայնքի ավագանու
2019 թվականի հունիսի 13-ի N 19 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

Կազմել է համայնքի ղեկավար Դավիթ Կարապետյանը

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2019 թվականի հունիսի 13 -ի թիվ 19-Ա որոշմամբ

ԾԱՂԿՈՒՆՔ 2019թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն - - -

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային հնարավորությունների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք իրատեսական քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը նախատեսում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումներ և դրան համապատասխան ծրագրանպատակային և արդյունավետ բյուջետավարման գործընթացի իրականացում:

2. ՀԶԾ-ի հիմքը համայնքի պայմանների և սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծությունն ու գնահատումն է: Խնդիրն այստեղ տեղի նյութական, աշխատանքային ու ֆինանսական ռեսուրսների և դրանց համակցման պոտենցիալ հնարավորությունների գնահատման, առկա հիմնախնդիրների վերհանման, սոցիալական և տնտեսական երևույթների կանխատեսման, համայնքի ուժեղ և թույլ կողմերի բացահայտման ճանապարհով համայնքի մասին ամբողջական պատկերացում կազմելն է ու այստեղից էլ՝ համայնքի ընթացիկ և միջնաժամկետ զարգացման նպատակային ուղղությունների սահմանումը:

3. ՀԶԾ-ն պարտադիր ներառում է համայնքի զարգացման վրա ազդող արտաքին միջավայրը՝ տեղական խնդիրների հետ միասնության մեջ: Այս առումով, ՏԻՄ-երի իրավասությունների շրջանակներում, ըստ առանձին բնագավառների (ոլորտների) նպատակների առաջադրումն ու կոնկրետ խնդիրների ձևակերպումը պետք է արտացոլի հանրապետական և մարզային ծրագրերով նախատեսվող՝ համայնքին առնչվող իրականացվելիք միջոցառումների համալիրը և դրանց գնահատումը:

4. ՀԶԾ-ի կարևոր բաղադրամասերից են նաև զարգացման ծրագրի ժամանակահատվածում համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը: Ցանկացած ծրագրի իրականացում կախված է ֆինանսական հնարավորություններից, որոնց ճշգրիտ կանխատեսումը պայմանավորում է իրականացվելիք ծրագրերի ընտրությունը: Խոսքը վերաբերում է ինչպես սեփական միջոցներին, այնպես էլ պաշտոնական տրանսֆերտներին և հնարավոր այլ միջոցներին: Այսպիսով, ՀԶԾ-ն հիմք է հանդիսանում համայնքի տարեկան բյուջեների կազմման համար: ՀԶԾ-ն հիմք է ստեղծում ծրագրային բյուջետավարման համար:

5. ՀԶԾ-ն հետապնդում է հետևյալ հիմնական նպատակները՝

1) ապահովել ՏԻՄ-երի լիազորությունների պատշաճ իրականացումը.
2) ապահովել համայնքի ամբողջական և համալիր զարգացումը.
3) բարելավել համայնքային ծառայությունների հասանելիությունը, մատչելիությունը և դրանց մատուցման որակը.
4) ապահովել ՏԻՄ-երի իրավասությունների բոլոր ուղղություններով ծրագրային լուծումների իրականացումը.
5) ընդլայնել համայնքային ծառայությունների մատուցման շրջանակը.
6) հասնել համայնքում առկա կարիքների /հիմնախնդիրների բավարարմանը/լուծմանը.
7) կանխել համայնքում նոր հիմնախնդիրների առաջացումը.
8) ապահովել համայնքում պատշաճ կառավարման սկզբունքների իրականացումը:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Հարգելի համագյուղացիներ, ավագանու անդամներ, համայնքապետարանի աշխատակիցներ, ողջունում և շնորհակալություն եմ հայտնում համայնքի զարգացման հնգամյա ծրագրի քննարկմանը ձեր մասնակցությունն ունենալու համար:

Համայնքում առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնք նախատեսվում է լուծել 2019-2023թթ՝ համայնքի գլխավոր հատակագծի գծագրում, ներհամայնքային ճանապարհների նորոգում, խմելու ջրի ներտնտեսային ցանցի նորոգում, փոխարինում, մշակույթի տան կապիտալ վերանորոգում, ոռոգման ջրագծի ներտնտեսային առավել քայքայված ցանցերի վերականգնում, նորոգում և կառուցում:

Ծրագրերի մշակման, քննարկման ու հաստատման աշխատանքները կլինեն թափանցիկ վստահ եմ, որ համայնք-բնակիչ համագործակցության շնորհիվ հնարավոր կլինի գրանցել ավելի լավ արդյունքներ և ունենալ առավել զարգացած համայնք:

Ծրագրերի արդյունավետ իրականացումը կնպաստի համայնքի զարգացմանը, մարդկանց բարեկեցության ապահովմանը:

Շնորհակալություն:

ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ԴԱՎԻԹ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1. ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

6. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքը կազմավորվել է 1800-1820- ական թվականներին: Համայնքը նախկինում ունեցել է Այլանլու, Այլանլու Վերին անվանումները: 1946 թվականին գերագույն խորհրդի որոշմամբ գյուղը վերանվանվել է Ծաղկունք:

Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքը գտնվում է Արմավիրի մարզում Վաղարշապատի տարածաշրջանում, տեղակայված է Քասաղ գետի ձախ ափին, Էջմիածին-Արմավիր խճուղու մոտ, Էջմիածնից 2 կմ հյուսիս-արևմուտք: Գյուղը բնակեցված է եղել Իրանից, Արևմտյան Հայաստանից 1946 թվականին հայրենադարձ եղած բնակիչներով: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ քաղաք Արմավիրից 25կմ է, իսկ Երևան-Էջմիածին մայրուղուց՝ 2կմ: Զվարթնոց օդանավակայանից հեռավորությունը կազմում է 10կմ: Համայնքից Էջմիածին հեռավորությունը 2կմ է, Երևան՝ 25կմ:

Համայնքը սահմանակից է Մրգաստան, Ծիածան, Արտիմետ և Էջմիածին համայնքներն:

Ծաղկունք համայնքը տեղակայված է Արարատյան դաշտավայրի գոտիում, գտնվում է ծովի մակերևույթից 900մ բարձրության վրա:

Կլիման բարենպաստ է. ձմռանը միջինից ցուրտ է, ամռանը՝ շոգ և քամոտ:

Խմելու ջուրը քաղցրահամ է, բարձրորակ, որը մատակարարվում է Նազրվանի և Բազմաղբյուրի խորքային հորերից:

Ծաղկունք համայնքում չկան հանքավայրեր:

7. Համայնքի բնակչության թիվը (1451 մարդ) և սոցիալական կազմը, այդ թվում՝

1)	կանայք	-	719
2)	տղամարդիկ	-	732
3)	0-6 տարեկան	-	90
4)	7-17 տարեկան	-	308
5)	18-63 տարեկան	-	952
6)	63 և բարձր	-	191
7)	կենսաթոշակառուներ	-	156
8)	փախստականներ	-	0
9)	միակողմանի ծնողազուրկ երեխաներ	-	10
10)	երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	-	1
11)	հայրենական պատերազմի մասնակիցներ	-	41
12)	արցախյան պատերազմի մասնակիցներ	-	16
13)	հաշմանդամներ	-	51
14)	աշխատունակներ	-	

15) զբաղվածներ - 896

16) գործազուրկներ - 11

17) տնային տնտեսությունների (ծխերի թիվը) - 305

18) ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքների - 26

19) հայրենական և արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքներ - 1

20) անօթևան ընտանիքներ - 0

2.2. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

8. Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 33776.8 հազար դրամ:

9. Սեփական եկամուտները 14484.8 հազար դրամ, որը կազմում է 42.9 (%):

10. Համայնքի գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղվում են հացահատիկի, բանջարաբոստանային մշակաբույսերի, ծաղիկի, բազմամյա խոտաբույսերի մշակմամբ և անասնապահությամբ:

Համայնքի ոռոգելի գյուղատնտեսական նշանակության հողատարածքը կազմում է 230.46հա:

Ծաղկունք համայնքում կա 39.34 հա արոտ՝ համայնքի հողային հաշվեկշիռը ներկայացված է հաշվետվություն Ձև NN22, 22ա:

Դաշտամիջյան ճանապարհներն անցանելի են, սակայն ասֆալտապատ չեն:

Խոշոր եղջերավոր անասունների քանակը կազմում է 125 գլուխ, որից կովեր՝ 58 գլուխ, խոզեր՝ 56, որից մայր խոզեր՝ 9: Թռչուններ՝ 923 թև, որից 744 ածան հավեր:

Համայնքում արտադրվում է ցորեն, գարի, եգիպտացորեն, բանջարեղեն, ծիրան, դեղձ, բալ և այլ պտուղներ: Գյուղատնտեսական արտադրանքը սպառվում է գյուղմթերքի շուկաներում:

11. Ծաղկունք համայնքում չկա դպրոց, շուրջ 160 աշակերտ հաճախում են Ծիածան և Էջմիածին համայնքների դպրոցներ: Ուսուցիչների թիվը 16-ն է:

Համայնքում կա մանկապարտեզ, որը չի գործում շենքի վթարային պայմանների պատճառով:

Գործում է բռնցքամարտի խմբակ, ուր հաճախում են 21 երեխա, նրանց մարզում է 1 մարզիչ:

12. Համայնքում գործում է գրադարան, կա բուժկետ :

13. Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքների թիվը 26-ն է, սոցիալական նպաստ ստացողները՝ 6:

2.3. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

14. Համայնքի 2017-2018թթ. բյուջեների մուտքերի ցուցանիշները 2019 թվականի նախատեսված և 2020-2024թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

Հ/հ	Մուտքերի անվանումը	2017թ. փաստ.	2018թ. նախատ.	2018թ. փաստ.	2019թ. նախատ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.	2022թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*	**33318.4**	**33805.1**	**33987.2**	**33776.8**	**33776.8**	**33776.8**	**33776.8**	**33776.8**	**33776.8**
I.	**ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)***	**33318.4**	**33805.1**	**33987.2**	**33776.8**	**33776.8**	**33776.8**	**33776.8**	**33776.8**	**33776.8**
1.	**ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ**	**13588.2**	**12939.1**	**13343.1**	**12884.0**	**12884.0**	**12884.0**	**12884.0**	**12884.0**	**12884.0**
1.1	**Գույքային հարկեր անշարժ գույքից**	**7160.6**	**6741.1**	**7105.1**	**6850.0**	**6850.0**	**6850.0**	**6850.0**	**6850.0**	**2440,0**
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	**1631.2**	**1441.1**	**1585.6**	**1550.0**	**1550.0**	**1550.0**	**1550.0**	**1550.0**	**1550.0**
	Հողի հարկ	5529.4	5300.0	5519.5	5300.0	5300.0	5300.0	5300.0	5300.0	5300.0
1.2	**Գույքային հարկեր այլ գույքից**	**6227.6**	**5800.0**	**5585.1**	**5400.0**	**5400.0**	**5400.0**	**5400.0**	**5400.0**	**5400.0**
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	**6227.6**	**5800.0**	**5585.1**	**5400.0**	**5400.0**	**5400.0**	**5400.0**	**5400.0**	**5400.0**
1.3	**Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ**	**200.0**	**398.0**	**652.9**	**634,0**	**634.0**	**634.0**	**634.0**	**634.0**	**634.0**
	Տեղական տուրքեր	200.0	398.0	652.9	634.0	634.0	634.0	634.0	634.0	634.0
1.4	**Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ**									
	Պետական տուրքեր									
1.5	**Այլ հարկային եկամուտներ**									
	Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ									
	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների									

	նկատմամբ									
2.	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	19292.0	19292.0	19292.0	19292.0	19292.0	19292.0	19292.0	19292.0	19292.0
2.1	**Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ**									
2.2	**Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ**									
2.3	**Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ**	**19292.0**	**19292.0**	**19292.0**	**19292.0**	**19292.0**	**19292.0**	**19292.0**	**19292.0**	**19292.0**
ա)	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	**19292.0**	**19292.0**	**19292.0**	**19292.0**	**19292.0**	**19292.0**	**19292.0**	**19292.0**	**19292.0**
բ)	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ									
գ)	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)									
դ)	ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ									
2.4	**Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ**									
ա)	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)									
բ)	ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ									
3.	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*	438.2	1574.0	1354.2	1600.8	1600.8	1600.8	1600.8	1600.8	1600.8
3.1	**Տոկոսներ**									
3.2	**Շահաբաժիններ**									
3.3	**Գույքի վարձակալությունից եկամուտներ**	433.2	460.0	437.2	486.8	486.8	486.8	486.8	486.8	486.8
	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	**433.2**	**460.0**	**437.2**	**486.8**	**486.8**	**486.8**	**486.8**	**486.8**	**486.8**
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ									
	Համայնքի վարչական տարածքում գտնվող									

	պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ									
	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր									
3.4	**Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից,** այդ թվում									
	Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ									
3.5	**Վարչական գանձումներ**	**5.0**	**1114.0**	**681,7**	**1114.0**	**1114.0**	**1114.0**	**1114.0**	**1114.0**	**1114.0**
	Տեղական վճարներ	**5.0**	**1114.0**	**681,7**	**1114.0**	**1114.0**	**1114.0**	**1114.0**	**1114.0**	**1114.0**
	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ									
	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարներ									
3.6	**Մուտքեր տույժերից, տուգանքներից**									
	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ									
	Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից									
3.7	**Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ**									
3.8	**Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ**									
3.9	**Այլ եկամուտներ***									
	Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր									
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից									

	մուտքեր									
	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ									
II.	**ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4)**									
1.	**Հիմնական միջոցների իրացումից մուտքեր**									
	Անշարժ գույքի իրացումից մուտքեր									
	Շարժական գույքի իրացումից մուտքեր									
	Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր									
2.	**Պաշարների իրացումից մուտքեր**									
3.	**Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր**									
4.	**Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր**									
	Հողի իրացումից մուտքեր									
	Ոչ նյութական չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր									
III.	**ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ)**									
Ա.	**ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2)**									
1.	**ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ**									
1.1	**Արժեթղթեր**									
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր									
	-հիմնական գումարի մարում									
1.2	**Վարկեր**									
	-վարկերի ստացում									
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում									
1.3	**Փոխատվություններ**									
	-բյուջետային փոխատվությունների ստացում									
	-ստացված փոխատվությունների գումարի մարում									
2.	**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ**									

2.1	**Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն**									
	-համայնքային սեփականության բաժնետոմսերի և կապիտալում համայնքի մասնակցության իրացումից մուտքեր									
	-իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից առաջացած միջոցներից համայնքի բյուջե մասհանումից մուտքեր									
	-բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն ձեռքբերում									
2.2	**Փոխատվություններ**									
	-նախկինում տրամադրված փոխատվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր									
	-փոխատվությունների տրամադրում									
2.3	**Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը**									
2.4	**Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս**									
2.5	**Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս**									
2.6	**Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում**									
	որից՝ ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը									
Բ.	ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ									
1.	ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ									
1.1	Արժեթղթեր									

	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր									
	-հիմնական գումարի մարում									
1.2	**Վարկեր**									
	-վարկերի ստացում									
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում									
1.3	**Փոխատվություններ**									
	-փոխատվությունների ստացում									
	-ստացված փոխատվությունների գումարի մարում									

*) Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացվող գումարը չի մտնում բյուջետային ընդհանուր եկամուտների մեջ

2.4. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

15. Համայնքի առջև ծառացած հիմնական խնդիրներն ու խոչընդոտներն են.

1) գործարար միջավայրի բարելավման և ձեռնարկատիրության բնագավառում ներդրողների բացակայությունը,
2) ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպման բնագավառում կահավորված և հարմարավետ դահլիճի, խաղահրապարակների բացակայությունը,
3) համայնքի բնակչության սոցիալական պաշտպանության ոլորտում՝ անապահով ընտանիքների առկայությունը (գործազրկություն),
4) գերեզմանատան պահպանման համար գերեզմանատան տարածքի ցանկապատի բացակայությունը (ֆինանսական միջոցների բացակայություն),
5) Աղետների ռիսկերի նվազեցման միջոցառումների իրականացման բնագավառում՝ սեյսմաշրջանցման ելակետային, սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզների բացակայությունը (ֆինանսական միջոցների բացակայություն),
6) Գյուղատնտեսության զարգացման բնագավառում՝ ոռոգման ջրի բարձր սակագինը, ցածր եկամտաբերությունը, տեխնիկաների բացակայությունը
7) Քաղաքաշինության բնագավառում ֆինանսական միջոցների բացակայության պատճառով համայնքի գլխավոր հատակագծ և գոտևորման նախագծ չի իրականացվել, որը նախատեսվում է կազմել:

2.5. ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ (ՈՒԹՀՍ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

16. Համայնքի ուժեղ կողմերն են.

Ծաղկունք համայնքի բարենպաստ աշխարհագրական դիրքը, մայրաքաղաքին, օդանավակայանին, կենտրոնական ճանապարհին, մարզկենտրոնին մոտ լինելը:

Համայնքի գազիֆիկացման բարձր աստիճանը:

Հեռախոսակապի առկայությունը:

Արտաքին լուսավորության առկայությունը:

Խմելու ջրի շուրջօրյա ջրամատակարարման առկայությունը:

Ոռոգման ներհամայնքային համակարգի առկայությունը և բավարար վիճակը:

Ներհամայնքային ճանապարհների բավարար վիճակը

17. Համայնքի թույլ կողմերն են.

Խմելու ջրագծի ներհամայնքային ցանցը քայքայված է ու վթարային վիճակում է գտնվում :

Մշակույթի տան շենքային պայմանների ոչ բավարար պայմաններ:

Ոռոգման ներհամայնքային ցանցի առավել քայքայված հատվածների առկայություն:

Մանկապարտեզի շենքի վթարային պայմաններ, որը պիտանի չէ շահագործման համար:

18. Հնարավորություններ.

Համայնքում առկա է մեծ աշխատուժ, որը կարող է օգտագործվել համայնքի զարգացման և համայնքային խնդիրների լուծման նպատակով:

19. Սպառնալիքներ.

Գարնանային ցրտահարությունները և կարկտահարության վտանգը, ուժեղ քամիների առկայությունը, գետի վարարումը:

3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

3.1. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆ

20. Համայնքի տեսլականն է՝ բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային վիճակը, համայնքը դարձնել բարեկարգ, ապրելու համար բարեկեցիկ բնակավայր:

21. Համայնքի սահմանված տեսլականին հասնելու համար համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակներն են՝

1) մշակույթի տան դահլիճի վերանորոգում, կահավորում, տանիքի փոխարինում

2) համայնքի գլխավոր հատակագծի գծագրում,

3) ներհամայնքային ճանապարհների նորոգում,

4) Խմելու ջրագծի առավել քայքայված հատվածների փոխարինում, նորի կառուցում

5) Ոռոգման առավել քայքայված հատվածների վերանորոգում, կառուցում

6) Մանկապարտեզի նոր շենքի կառուցում

3.2. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

22. Ստորև ներկայացվում են ՀԶԾ-ում ներառված ոլորտային ծրագրերի առանձին ձևակերպումներն՝ ըստ ոլորտային ծրագրի օրինակելի ձևի:

ԾՐԱԳԻՐ 1՝ Մշակույթի տան դահլիճի վերանորոգում, կահավորում, տանիքի փոխարինում

Ծրագրի նկարագրությունը և հիմնավորումը

Ծաղկունք համայնքի մշակույթի տունը կառուցվել է 1962 թվականին: Մշակույթի տան մի հատվածը վերանորոգվել է, իսկ մյուս մասը չի օգտագործվում ոչ բավարար պայմանների պատճառով: Մշակույթի տան դահլիճը վերանորոգված չէ, չունի կահավորում այդ պատճառով մշակութային ծրագրեր, միջոցառումներ չեն անցկացվում:

Ծրագրի նպատակը և խնդիրները

1) Աշխուժացնել մշակութային կյանքը համայնքում:
2) Կազմակերպել միջոցառումներ, ցերեկույթներ:
3) Հնարավորություն տալ տարբեր խմբակների՝ սպորտային, պարային, թատերական և այլն, իրականացնելու իրենց գործունեությունը համայնքում:
4) Նպաստել երեխաների, պատանիների մշակութային և ֆիզիկական զարգացմանը:
5) Ստեղծել նոր աշխատատեղեր:

Ծրագիրը նախատեսվում է իրականցնել 2019-2023 թվականներին՝ պետության աջակցության և դոնոր կազմակերպությունների միջոցներով: Ծրագրի արժեքը կկազմի 12.0 միլիոն դրամ:

ԾՐԱԳԻՐ 2՝ Համայնքի գլխավոր հատակագծի գծագրում

Ծրագրի նկարագրությունը և հիմնավորումը

Ծաղկունք համայնքը չունի քաղաքաշինական փաստաթղթեր՝ գլխավոր հատակագիծ, որը քաղաքաշինության ոլորտում պարտադիր փաստաթուղթ է:

Ծրագրի նպատակը և խնդիրները

Ունենալ համայնքի գլխավոր քաղաքաշինական փաստաթուղթը՝ գլխավոր հատակագիծը:

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2019-2023 թվականներին՝ պետբյուջեի միջոցների հաշվին: Ծրագրի արժեքը կկազմի 5.0 միլիոն դրամ:

ԾՐԱԳԻՐ 4՝ Ներհամայնքային ճանապարհների նորոգում

Ծրագրի նկարագրությունը և հիմնավորումը

Ծաղկունք համայնքի ներհամայնքային ճանապարհների երկարությունը 7700 մետր է, որի զգալի մասը տարների ընթացքում համայնքի բյուջեի միջոցների հաշվին վերանորոգվել է, մի մասն՝ էլ գտնվում է ոչ բարվոք վիճակում, որով ստեղծվում են դժվարություններ՝ մարդկանց, մեքենաների տեղաշարժի և երթևեկության համար:

Ծրագրի նպատակը և խնդիրները

1) Ունենալ բարեկարգ ճանապարհներ:
2) Ապահովել մարդկանց, մեքենաների անվտանգ տեղաշարժն ու երթևեկությունը: Խուսափել դժբախտ պատահարներից, դեպքերից:

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2019-2023 թվականներին՝ համայնքի բյուջեի միջոցների հաշվին: Ծրագրի արժեքը կկազմի 4.5 միլիոն դրամ:

ԾՐԱԳԻՐ 4՝ Խմելու ջրագծի առավել քայքայված հատվածների փոխարինում, նորի կառուցում

Ծրագրի նկարագրությունը և հիմնավորումը

Ծաղկունք համայնքի խմելու ջրագիծը կառուցվել է 1960-ական թվականներին, խմելաջրի ներհամայնքային հին ցանցը կառուցված է մետաղյա խողովակներով, որն ամբողջովին քայքայված է և ոչ պիտանի հետագա շահագործման համար, իսկ փողոցների մնացած հատվածները չունեն խմելու ջուր, ջրագծի բացակայության պատճառով:

Ծրագրի նպատակը և խնդիրները

1) Շուրջ 209 տնտեսություն կունենան խմելու ջուր և առավել բարեկեցիկ կոմունալ պայմաններ:
2) Ապահովել համայնքի տարբեր հատվածների համաչափ զարգացումը, բնակիչների բարեկեցիկ պայմանների ստեղծումը:

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2019թ՝ պետության աջակցության՝ սուբվենցիայի տրամադրման և համայնքի բյուջեի միջոցների հաշվին: Ծրագրի նախահաշվային արժեքը կազմում է 48196.6 հազ. ՀՀ դրամ, որի 45% կներդրվի համայնքի կողմից, իսկ 55%-ն ակնկալվում է պետբյուջեից:

ԾՐԱԳԻՐ՝ 5 Ոռոգման առավել քայքայված հատվածների վերանորոգում, կառուցում

Ծրագրի նկարագրությունը և հիմնավորումը

Ծաղկունք համայնքի ոռոգման ներտնտեսային ցանցի որոշ հատվածներ առավել քայքայված են մի մասն էլ հողային է, որի հետևանքով զգալի ջրի կորուստ է ունենում և դրանից տուժում է գյուղատնտեսությունը: Նոր ոռոգման համակարգի կառուցման և նորագման համար ոռոգման ջրագիծը 1771 մետր է, որը նախատեսվել է իրականացնել 2019 թվականին համայնքի բյուջեից ծրագրի արժեքի 10% համաֆինանսավորմամբ:

Ծրագրի նպատակը և խնդիրները

1 Շուրջ 150,0 հա գյուղատնտեսական նշանակության ոռոգվող հողատարածքների համար ջրամատակարարման որակը կբարձրանա, ջրի կորուստ գրեթե չի լինի:

2 Կնապաստի գյուղատնտեսության զարգացմանը և կնպաստի գյուղատնտեսական արտադրանքի զարգացմանը:

Ծրագրի նախահաշվային արժեքը կազմում է 74676,28 հազ. << դրամ, որի 10%-ը համաֆինանսավորմամբ տրամադրվելու է համայնքի բյուջեից:

ԾՐԱԳԻՐ 7՝ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՆՈՐ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Ծրագրի նկարագրությունը և հիմնավորումը

Ծաղկունք համայնքի մանկապարտեզի շենքը կառուցվել է 1937 թվականին, որը ամբողջովին վթարային է և ոչ պիտանի շահագործման համար: 2017 թվականին պետբյուջեի միջոցների հաշվին նոր մանկապարտեզի շենքի կառուցման համար կատարվել է նախագծանախահաշվային աշխատանքներ:

Ծրագրի նպատակը և խնդիրները

Ծրագիրը նպատակ ունի համայնքում զարգացնելու համայնքի երեխաների նախադպրոցական կրթությունը, հիմնելու նոր աշխատատեղեր, որը կնպաստի գործազրկության թվի նվազմանը:

Ծրագրի նախահաշվային արժեքը 273.191,24 հազ. << դրամ. , որը իրականացվելու է պետական բյուջեի միջոցներով:

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 1

« Մշակույթի տան դահլիճի վերանորոգում, կահավորում, տանիքի փոխարինում »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Մշակույթի տան նոր դահլիճի կառուցում						
Ծրագրի անմիջական նպատակ							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2018	2019	2020	2021	2022	2023
		-	12000000	12000000	12000000	12000000	12000000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Նախագիծ-նախահաշվի փաստաթղթերի պատվիրում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2018	2019	2020	2021	2022	2023
		--	350000	350000	350000	350000	350000
	2. Մրցույթի հայտարարում, աշխատանքների իրականացում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2018	2019	2020	2021	2022	2023
		12000000	12000000	12000000	12000000	12000000	12000000
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Նախագիծ-նախահաշվի փաստաթղթերի պատվիրում 1.2. 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Մրցույթի հայտարարում, աշխատանքների իրականացում 2.2. Գույքի գնում, տանիքի փոխարինում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝ 12000000 Ընդհանուր բյուջեն՝ 12000000						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Համայնքի բնակչության օգնությունը՝ աշխատուժով						
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքապետարան						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2019-2023թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Աշխուժացնել մշակութային կյանքը համայնքում: Կազմակերպել միջոցառումներ, ցերեկույթներ: Հնարավորություն տալ տարբեր խմբակների՝ սպորտային, պարային, թատերական և այլն, իրականացնելու իրենց գործունեությունը համայնքում: Նպաստել երեխաների, պատանիների մշակութային և ֆիզիկական զարգացմանը: Ստեղծել նոր աշխատատեղեր:						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 2

«Համայնքի գլխավոր հատակագծի գծագրում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի գլխավոր հատակագծի գծագրում						
Ծրագրի անմիջական նպատակ							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2018	2019	2020	2021	2022	2023
		5000000	5000000	5000000	5000000	5000000	5000000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Համայնքի գլխավոր հատակագծի գծագրի պատվիրում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2018	2019	2020	2021	2022	2023
		5000000	5000000	5000000	5000000	5000000	5000000
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2018	2019	2020	2021	2022	2023
		5000000	5000000	5000000	5000000	5000000	5000000
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Համայնքի գլխավոր հատակագծի գծագրի պատվիրում 1.2. 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝ 5000000 Ընդհանուր բյուջեն՝ 5000000						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքապետարան						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2019-2023թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ունենալ համայնքի գլխավոր քաղաքաշինական փաստաթուղթը՝ գլխավոր հատակագիծը:						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 3

«Ներհամայնքային ճանապարհների նորոգում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ներհամայնքային ճանապարհների նորոգումն						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2018	2019	2020	2021	2022	2023
		500000	4500000	4500000	4500000	4500000	4500000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Ճանապարհների փոսալցման և հարթեցման աշխատանքներ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2018	2019	2020	2021	2022	2023
		500000	4500000	4500000	4500000	4500000	4500000
	2. Ճանապարհների խչապատում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2018	2019	2020	2021	2022	2023
		500000	4500000	4500000	4500000	4500000	4500000
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Ճանապարհների փոսալցման աշխատանքներ 1.2. հարթեցման աշխատանքներ 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Խճապատում 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝ 4500000 Ընդհանուր բյուջեն՝ 4500000						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքապետարան						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2019-2023թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ապահովել մարդկանց, մեքենաների անվտանգ տեղաշարժն ու երթևեկությունը, խուսափել դժբախտ դեպքերից:						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 4

« Խմելու ջրագծի առավել քայքայված հատվածների փոխարինում, նորի կառուցում »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Խմելու ջրագծի առավել քայքայված հատվածների փոխարինում, նորի կառուցում						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2018	2019	2020	2021	2022	2023
		-	48196630	--	-	-	-
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Նախագիծ-նախահաշվի փաստաթղթերի ծախսեր						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2018	2019	2020	2021	2022	2023
		--	48196630	--	-	-	-
	2. Ցանկապատման աշխատանքների իրականացում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2018	2019	2020	2021	2022	2023
		--	48196630	--	-	-	-
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Նախագիծ-նախահաշվի փաստաթղթերի ծախսեր 1.2. 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Շինարարության աշխատանքների կատարում 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝ 48196630 Ընդհանուր բյուջեն՝ 48196630						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	2019 թվականի սուբվենցիայի տրամադրմամբ, որը կկազմի ծրագրի արժեքի 55%-*ը, իսկ մնացած 45%-ը կտրամադրվի համայնքի բյուջեի հաշվին						
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքապետարան, բնակչություն						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2019-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	3500 մետր խմելու ջրագծի նորգմամբ և կառուցմամբ համայնքի շուրջ 209 տնտեսություն կապահովվի մշտական ջրով, որը կբարելավի բնակիչների կենցաղային պայմանները, կնպաստի կենսամակարդակի բարձրացմանը:						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 5

« Ոռոգման ջրագծի առավել քայքայված հատվածների վերանորոգում, կառուցում »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ոռոգման ջրագծի առավել քայքայված հատվածների վերանորոգում, կառուցում						
Ծրագրի անմիջական նպատակ							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2018	2019	2020	2021	2022	2023
			74676280				
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Շինանյութի ձեռքբերում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2018	2019	2020	2021	2022	2023
			74676280				
	2. Վերանորոգման աշխատանքների իրականացում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2018	2019	2020	2021	2022	2023
			74676280				
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերում 1.2. 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Շինարարական աշխատանքների իրականացում 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝ 74676280 Ընդհանուր բյուջեն՝ 74676280						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Համայնքի բնակչության օգնությունը՝ աշխատուժով						
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Ոռոգման առավել քայքայված հատվածների վերանորոգման, կառուցման աշխատանքները կատարվելու են ծրագրի շրջանակներում, համայնքի բյուջեից 10% համաֆինանսավորմամբ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2019թ. ապրիլ-հունիս						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ոռոգման ջրագիծի կառուցմամբ 150,0 հա տարածքների ոռոգման աշխատանքները կդառնան առավել արդյունավետ, ջրի կորուստ գրեթե չի լինի, կնպաստի գյուղատնտեսության զարգացմանը, բերքատվության աճին:						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 6

« Մանկապարտեզի նոր շենքի կառուցում »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Մանկապարտեզի նոր շենքի կառուցում						
Ծրագրի անմիջական նպատակ							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2018	2019	2020	2021	2022	2023
			273191240	273191240	273191240	273191240	273191240
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Շինանյութի ձեռքբերում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2018	2019	2020	2021	2022	2023
			273191240	273191240	273191240	273191240	273191240
	2. Կառուցման աշխատանքների իրականացում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2018	2019	2020	2021	2022	2023
			273191240	273191240	273191240	273191240	273191240
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերում 1.2. Շինանյութերի ձեռքբերում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Շինարարական աշխատանքների իրականացում 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝ 273191240 Ընդհանուր բյուջեն՝ 273191240						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Պետբյուջեի միջոցների						
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնք						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2019-2023թթ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Մանկապարտեզի շենքի կառուցմամբ /80 տեղանոց/ կառուցմամբ համայնքի նախադպրոցական տարիքի երեխաները կհաճախեն մանկապարտեզ, կբացվեն նոր աշխատատեղեր, որը կնպաստի գործազրկության թվի նվազմանը:						

4. ՀՀՀԶԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

2019-2023թթ. սոցիալ տնտեսական զարգացման հնգամյա ծրագրով ըստ առանձին բնագավառների նախատեսվող ծրագրերի, միջոցառումների և աշխատանքների համառոտ ամփոփագիր :

N	Ծրագրի, միջոցառման, աշխատանքի անվանումը	ծավալը	ֆինանսական միջոցների անհրաժեշտ քանակը /հազ.դրամ/	ֆինանսավորման աղբյուրները			կատարման ժամկետները					պատասխանատու
				համայնքի բյուջե	դրսնոր կազմակ	այլ/պետ բյուջե և այլն/	2019թ. ծավալը ֆին.միջոց	2020թ. ծավալը ֆին.միջոց	2021թ. ծավալը ֆին.միջոց	2022թ. ծավալը ֆին.միջոց	2023թ. ծավալը ֆին.միջոց	
1.	Մշակույթի տան դահլիճի վերանորոգում, կահավորում, տանիքի փոխարինում		12000.0	5400.0	-	6600.0	-	6600.0	6600.0	6600.0	6600.0	համայնքի ղեկավար
2.	Համայնքի գլխավոր հատակագծի գծագրում		5000,0	-	-	5000.0	5000.0	5000.0	5000.0	5000.0	5000.0	համայնքի ղեկավար
3.	Ներհամայնքային ճանապարհների նորոգում		4500,0	4500,0	-	-	900.0	900.0	900.0	900.0	900.0	համայնքի ղեկավար
4.	Խմելու ջրագծի առավել քայքայված հատվածների փոխարինում, նորի կառուցում		48196,6	21688,4	-	26508.2	21482.6	-	-	-	-	համայնքի ղեկավար
5.	Ոռոգման ջրագծի առավել քայքայված հատվածների վերանորոգում, կառուցում		74676.2	7467.6	-	67208.6	74676.2	-	-	-	-	համայնքի ղեկավար
6.	Մանկապարտեզի նոր շենքի կառուցում		273191.24	-		273191.24	273191.24	273191.24	273191.24	273191.24	273191.24	համայնքի ղեկավար

5. ՀՀՌԾ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Իրականացման փուլում գտնվող ծրագրերը պետք է մոնիթորինգի ենթարկվեն: Մոնիթորինգը կառավարչական գործիք է, որը հնարավորություն է տալիս հսկել ծրագրերի կատարման ընթացքը և անհրաժեշտ փոփոխություններ նախաձեռնել: Մոնիթորինգն իրականացվում է համապատասխան կատարողականի ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ հավաքագրելու և ցուցանիշների փաստացի արժեքները թիրախային արժեքների հետ համեմատելու միջոցով: Համեմատության միջոցով հնարավոր է լինում չափել ծրագրի առաջընթացը, հաջողության աստիճանը, ծրագրով պայմանավորված փոփոխությունները կամ գնահատել ծրագիրն իրականացնողի կատարողականը: Մոնիթորինգն, առաջին հերթին, անհրաժեշտ է համայնքի ղեկավարությանը, որպեսզի հնարավոր լինի ձեռքը պահել Ծրագրի «զարկերակի» վրա:

ՀՀՌԾ մոնիթորինգի պլանը ներկայացված է աղյուսակում:

հողային ֆոնդի առկայության և բաշխման

(ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության և սեփականության սուբյեկտների առ 01.07.2018թ.)

Մարզ Արմավիր (անվանումը) 4 (Կոդ)

Համայնք Ծաղկունք (անվանումը) 276 (Կոդ)

(հեկտարներով)

NN	Նպատակային նշանակության	Հողատեսք, գործառնական նշանակության	Կոդի NN	Ընդամենը (2+3+4+8+12)	Սեփականության սուբյեկտ: ՀՀ քաղաքացիների	ՀՀ իրավաբանական անձանց	համայնքային: ընդամենը (5+6+7)	տրված անհատաց	տրված վարձակալության	ոչ դրամական գնով	պետական: ընդամենը (9+10+11)	տրված գնի դիմաց	տրված վարձակալության	ոչ դրամական գնով	Օտար պետություն-ների, կազմ-ի և ՀՀ-ում կացության հատուկ սուբ.
	Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.1	1. Գյուղատնտեսական	վարելահող		153.76	131.10		22.66		20.69	1.97					
1.2		բազմ.տնկարկներ		5.70	5.70										
1.2.1		այդ թվում՝ պտղատու այգի		3.0	3.0										
1.2.2		խաղողի այգի		2.7	2.70										
1.2.3		այլ բազմամյա													
1.3		խոտհարք		39.34	38.40		0.94			0.94					
1.4		արոտ		31.55	20.94		10.60			10.60					
1.5		այլ հողատեսքեր		230.35	196.14		34.20		20.69	13.51					
1		Ընդամենը													
2.1	2. Բնակավայրերի	բնակելի կառուցապատման		78.06	78.06										
2.1.1		այդ թվում՝ տնամերձ հողեր		78.06	78.06										
2.1.2		այգեգործական (ամառ-ն)													
2.2		հասարակական		4.29	0.72		2.57			2.57	1.0			1.0	
2.3		խառը կառուցապատման													
2.4		ընդհանուր օգտագործման		18.55			18.55			18.55					
2.5		այլ հողեր		10.23			10.23			10.23					
2		Ընդամենը		111.13	78.78		31.35			31.35	1.0			1.0	
3.1	3.Արդյունաբ., ընդերքօգտ. և այլ արտ. նշանակութ.	արդյունաբերության		1.49	0.28	1.21									
3.2		գյուղատնտեսական		14.65	0.13		14.52			14.52					
3.3		պահեստարանների		2.65	0.60		2.05			2.05					
3.4		ընդերք օգտագործման													
3		Ընդամենը		18.79	1.01	1.21	16.57			16.57					
4.1	4. Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ	էներգետիկայի		1.16			0.02			0.02	1.14			1.14	
4.2		կապի													
4.3		տրանսպորտի		4.38							4.38			4.38	
4.4		կոմունալ ենթակառուցվածք		0.21			0,21			0.21					
4		Ընդամենը		5.75			0,23			0.23	5.52			5.52	
5.1	5. Հատուկ պահպանվող տարածքների	բնապահպանական													
5.1.1		այդ թվում՝ արգելոցներ													
5.1.2		արգելավայրեր													
5.1.3		ազգային պարկեր													
5.2		առողջարարական													
5.3		հանգստի													
5.4		պատմական և մշակութային		3.87			2.22			2.22	1.65			1.65	
5		Ընդամենը		3.87			2.22			2.22	1.65			1.65	
6	6.Հատուկ նշանակության	Ընդամենը		1.13							1.13			1.13	
7.1	7. Անտառային	անտառ													
7.2		թփուտ													
7.3		վարելահող													
7.4		խոտհարք													
7.5		արոտ													
7.6		այլ հողեր													
7		Ընդամենը													
8.1	8. Ջրային	գետեր		6.39							6.39			6.39	
8.2		ջրամբարներ													
8.3		լճեր		2.90			2.90				2.90				
8.4		ջրանցքներ		1.18			1.18				1.18				
8.5		հիդրոտեխ. և ջրտնտ. այլ		1.01								1.01		1.01	
8		Ընդամենը		11.48			4.08				4.08	7.40		7.40	
9.1	9. Պահուս-տային	աղուտներ													
9.2		ավազուտներ													
9.3		ճահիճներ													
9.4															
9.5		այլ անօգտագործելի հողեր													
9		Ընդամենը												16.70	
ԸՆԴԱՄԵՆԸ ՀՈՂԵՐ (1+2+3+4+5+6+7+8+9)				382.6	275.9	1.21	88.65		20.69	67.96	16.70				

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՁևN 22 ա

Հայաստանի Հանրապետության ոռոգվող հողերի առկայության և բաշխման
(ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և սեփականության սուբյեկտների)

Մարզ Արմավիր (անվանում) 4 (Կոդ)

Համայնք Ծաղկունք (անվանում) 276 (Կոդ)

NN	Նպատակային նշանակության	Գործառնական նշանակության, հողատեսք	Կոդի NN	Ընդամենը ոռոգվող հողեր (2+3+4+5+6)	Սեփականության սուբյեկտ				
					ՀՀ քաղաքացիների	ՀՀ իրավաբանական անձանց	համայնքային	պետական	Օտար պետության, կազմ-ի և ՀՀ-ում կացության հատուկ կարգ.
	Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6
1.1	1. Գյուղատնտեսական	վարելահող		153.76	131.1		22.66		
1.2		բազմ. տնկարկներ, ընդամենը		5.70	5.70				
1.2.1		այդ թվում՝ պտղատու այգի		3.0	3.0				
1.2.2		խաղողի այգի		2.70	2.70				
1.2.3		այլ							
1.3		խոտհարք							
1.4		արոտ							
1.5		այլ հողատեսքեր							
1		Ընդամենը (1.1+1.2+1.3+1.4+1.5)		159.46	136.8		22.66		
2.1	2. Բնակավայրերի	բնակելի կառուցապատման		71.0	71.0				
2.1.1		այդ թվում՝ տնամերձ հողեր		71.0	71.0				
2.1.2		այգեգործական (ամառանոցային)							
2.2		ընդհանուր օգտագործման							
2.3		այլ հողեր							
2		Ընդամենը (2.1+2.2+2.3)		71.0	71.0				
3	3. Արդյունաբ., ընդերքօգտ., և այլ արտ. նշանակության								
4	4. Էներգետիկայի, տրանսպ., կապի, կոմունալ ենթակառուցվածքների								
5	5. Հատուկ պահպանվող տարածքների								
6	6. Հատուկ նշանակության								
7.1	7. Անտառային	անտառ							
7.2		թփուտ							
7.3		վարելահող							
7.4		խոտհարք							
7.5		արոտ							
7.6		այլ հողեր							
7		Ընդամենը (3.1+3.2+3.3+3.4+3.5+3.6)							
8	8. Ջրային								
9	9. Պահուստային								
ԸՆԴԱՄԵՆԸ ՈՌՈԳՎՈՂ ՀՈՂԵՐ (1+2+3+4+5+6+7+9)				230.46	207.80		22.66		

Ծաղկունք համայնքի ղեկավար _____ /ստորագրություն, կնիք/

Կատարող՝ _____ /ստորագրություն/

ԱԳԿՊԿ տարածքային ստորաբաժանման ղեկավար _____ /ստորագրություն, կնիք/

1. ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Համաձայն տեղական ինքնակառավարման բնագավառի ՀՀ օրենսդրության, ՀԶԾ-ն հանդիսանում է համայնքի գալիք տարիների բյուջեների ձևավորման ծրագրային հիմքը: ՀԶԾ-ում 2019-2023թթ. համար նախատեսված ոլորտային ծրագրերը, համայնքային ծառայությունները և միջոցառումները հիմք կհանդիսանան համայնքի այդ տարիների բյուջեների կազմման, ընդունման և իրականացման համար: Գործնականում, ՀԶԾ-ի իրականացումը կհանգի համայնքի գալիք տարիների բյուջեների մշակմանը և կատարմանը: Հետևաբար, համայնքի 2019-2023թթ. ՀԶԾ-ն ամբողջական ծավալով իրականացնելու հարցը մեծապես կախված կլինի համայնքի առաջիկա հինգ տարիների բյուջեներում նախատեսվող մուտքերի փաստացի կատարման մակարդակից, ինչպես նաև դրանց խնայողաբար ու արդյունավետ ծախսումից:

ՀԶԾ-ի իրականացման հսկողությունը և ներքին վերահսկողությունը կիրականացնեն համապատասխանաբար համայնքի ղեկավարը և համայնքի ավագանին: ՀԶԾ-ի ներքին վերահսկողության արդյունքները կներկայացվեն համայնքի ավագանուն՝ ի գիտություն:

Համայնքի ղեկավարը, մինչև ՀԶԾ-ի իրականացման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանուն ներկայացնելը, 15-օրյա ժամկետում կկազմակերպի և կանցկացնի հանրային բաց քննարկումներ՝ այդ մասին իրազեկելով համայնքի բնակչությանը, որից հետո օրենքով սահմանված կարգով կներկայացնի համայնքի ավագանու քննարկմանը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-Ի << ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 19-Ա ՈՐՈՇՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի ավագանու 2019 թվականի հունիսի 13-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին>> N19-Ա որոշման ընդունումը պայմանավորված է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի, 82-րդ հոդվածի պահանջներով և ուղղված է ապահովելու համայնքի զարգացման տեսլականը և խնդիրներն առաջիկա հինգ տարում:

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի ավագանու 2019 թվականի հունիսի 13-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին>> N19-Ա որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ծաղկունք, 4-74-88, tsaghkunq.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 20-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի սոցիալական հարցերով զբաղվող հանձնաժողովի կազմած եզրակացությունները, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին՝

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի սոցիալապես անապահով և կարիքավոր ընտանիքներին տալ դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ԵՐԱՆՈՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ

ԵՐԱՆՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ԱԼԻԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Ծաղկունք համայնքի ավագանու 2019 թվականի
հունիսի 13-ի N 05-նիստի թիվ 20-Ա որոշման

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Էլլա Էդուարդի	20.0 հազ. / քսան հազար/ դրամ
2. Հովհաննիսյան Անահիտ Հովհաննեսի	33.0 հազ. /երեսուներեք հազար/ դրամ
3. Մնացականյան Հովհաննես Հարությունի	20.0 հազ. /քսան հազար/ դրամ
4. Սարգսյան Գրիգոր Անդրանիկի	57.0 հազ. /հիսունյոթ հազար/ դրամ
5. Արմենակյան Հովհաննես Ալբերտի	20.0 հազ. /քսան հազար/
6. Կարապետյան Արտուշ Մկրտիչի	100.0 հազ. /մեկ հարյուր հազար/ դրամ
7. Դարվիշյան Ռոման Շիրինշայի	45.0 հազ. /քառասունհինգ հազար/ դրամ
8. Գյոզալյան Նարինե Ռաֆիկի	43.0 հազ. /քառասուներեք հազար/ դրամ
9. Բաղդասարյան Սեդիկ Նահապետի	40.0 հազ. /քառասուն հազար/ դրամ
10. Գյոզալյան Ռաֆայել Լևոնի	39.0 հազ. /երեսունինը հազար/ դրամ

Ընդամենը՝ 417.0 հազ. / չորս հարյուր տասնյոթ հազար / դրամ: